ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Հետազոտող ուսուցիչ՝ Արուսյակ Բուլոյի Սիմոնյան

Հայկավանի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Նատալյա Վարդանյան

ԱՐՄԱՎԻՐ-2022

Բովանդակություն

Նախաբան----------3

Գրական ակնարկ----------5

Գործնական համատեքստ----------8

Հետազոտության ընթացք----------11

Եզրակացություն----------14

Գրականության ցանկ----------15

Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Նախաբան

« Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությունից է կախված մարդկային ամբողջ մեծ հասարակության անվտանգությունը»

Ադլիր

Պետության հիմքը ընտանիքն է,հենասյուները՝ կրթությունը և դաստիարակությունը: Եթե մինչև 21-րդ դարը ընդհանուր զարգացումը տեղի էր ունենում թվաբանական պրոգրեսիայի նման, ապա 21-րդ դարում երկրաչափական պրոգրեսիայի: Ժամանակակից աշխարհում գրեթե բոլոր ոլորտներում փոփոխություններն աննախադեպ արագ և դինամիկ են ընթանում: Գիտության և տեխնիկայի ընձեռած նոր հնարավորությունները արագորեն ներթափանցում են հասարակական հարաբերությունների, կյանքի կազմակերպման, գիտելիքների ձևավորման և փոխանցման ոլորտ: Փոխվել են համաշխարհային հիմնախնդիրները: Մենք ապրում ենք տնտեսական և սոցիալական նոր միջավայրում, որը պահանջում է նոր կրթական պայմաններ:Հանրակրթության դերը աճում է, միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի,որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝զարգացնելով հանդուրժողականության,համագործակցության և արժեքային որակները: Կրթության գերխնդիրը կրթության որակի բարելավումն է,այն իրականացնելու համար անհրաժեշտ է հանրակրթության էական բարեփոխումներ: Պետության և ազգի անվտանգութան ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին

դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Գիտատեխնիկական այս զարգացած շրջանում առաջացել է այնպիսի իրավիճակ,որ առաջնային հիմնախնդիր է դարձել անվտանգության մշակույթի ձևավորումը. միայն գիտելիքները և հմտությունները բավարար չեն, անհրաժեշտ է ստեղծել ուսուցման և դաստիարակության այլ մոտեցումներ: Անհրաժեշտություն է դառնում կրթական համակարգում փոփոխություններ կատարել,ստեղծել ուսուցման, դաստիարակության այնպիսի նորմեր, գտնել կրթության կազմակերպան այնպիսի ձևեր, ուղիներ,որոնք կնպաստեն ձևավորել այնպիսի անձ,ով կկրի անվտանգության մշակույթ,ինչը թույլ կտա դիմակայել առկա վտանգներին, կկարողանա ըմբռնել նորարարական գիտատեխնիկական նվաճումները, լինել հանդուրժող, ստեղծագործ:Մեր երկրում մեծ ուշադրություն է դարձվում կրթության բարեփոխումներին: Անհրաժեշտ է,որ յուրաքանչյուրս հետամուտ լինենք այդ գործընթացին և ելնելով մեր ունեցած աշխատանքային փորձից՝ նպաստենք այդ գործընթացին: Ընտանիքը պետության հիմքն է և կրթության զարգացման պրոցեսում մեծ նշանակություն ունի:Ընտանեկան դաստիարակության համակարգը փոփոխություններ է կրել,փոխվել է ավանդական ընտանիքի նկարագիրը՝արդիական դարձնելով դպրոցի և ընտանիքի համագործակցության հիմնախնդիրը: Այստեղ է, որ դպրոց-ընտանիք համագործակցությունը դառնում է առաջնային:Ընտանիքը մնայուն է սովորողի կյանքում,դպրոցը և ծրագրերը՝ փոփոխական:Հենվելով ընտանիքի ուժեղ կողմերի և յուրահատկությունների ճանաչման և ընդունման վրա՝ անհրաժեշտ է խթանել ծնող-դպրոց, ծնող-ուսուցիչ համագործակցությունը՝ կրթության որակը բարելավելու համար: Անհրաժեշտ է ծնողական կրթության միջոցով ընտանեկան բարենպաստ միջավայր ստեղծել, որտեղ սովորողի համար դպրոց-ընտանիք փոխհարաբերություններում հակասություն չի առաջանա: Այսինքը դպրոցում սովորածը,տեսածը չի հակասի ընտանիքի պրակտիկային: Անհրաժեշտ է ցուցաբերել պատրաստակամություն ծնողներին մանկավարժական աջակցություն տրամադրելու համար:Ուսուցիչ-ծնող (ծնողի օրինական ներկայացուցիչ) համագործակցության շնորհիվ մենք կարող ենք հաղթահարել մեր առջև դրված բոլոր խնդիրները,ծնողների ներգրավվումը դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում,հաճախակի հանդիպումները, միջոցառումները, էքսկուրսիաները հնարավորություն կտան հասնել սովորողի ընտանեկան դաստիարակության այնպիսի մակարդակի, որ դարի մարտահրավերներին համապատասխան կրթված,դաստիարակված սովորող ունենանք :

Գրական ակնարկ

Մարդուն շրջապատող միջավայրի հիմնախնդիրների մասին ՄԱԿ-ի ստոկհոլմյան կոնֆերանսի հռչակագրի» առաջին կետով հռչակվում է, որ «Մարդը իր շրջակա միջավայրի միաժամանակյա ստեղծողն ու կառուցողն է: Այդ միջավայրն է, որն ապահովում է նրա ֆիզիկական գոյությունը և հնարավորություններ ստեղծում նրա մտավոր, բարոյական,սոցիալական և հոգևոր զարգացման համար: Մարդուն շրջապատող երկու միջավայրերն էլ՝թե բնական, թե իր կողմից ստեղծված, վճռական նշանակություն ունեն նրա բարեկեցության և մարդու հիմնական իրավունքների իրականացման համար:» [1] Այս տեսանկյունից՝սովորողին շրջապատող սոցիալ-մշակութային միջավայրի դաստիարակչական և զարգացնող դերը, սովորողի ինքնազարգացմանը նպաստող կրթական միջավայրի ստեղծմանը սովորողի մասնակցության անհրաժեշտության գիտակցումը նոր իմաստ է ստանում:[1]

Ընտանիքի՝ որպես անձի սոցիալականացման առաջնային ինստիտուտի կարևորագույն գործառույթը աճող սերնդի դաստիարակությունը, զարգացումն ու սոցիալականացումն է: Նրանով են պայմանավորված հասարակության վերարտադրության, աճող սերնդի դաստիարակության, սոցիալականացման, նյութական ապահովության, հոգևոր կայուն զարգացման իրականացման հնարավորությունները:

Ներկայումս ընտանեկան դաստիարակության համակարգը որոշակի փոփոխություններ է կրում. սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային տեղաշարժերի հորձանուտում աղճատվում է նաև ավանդական ընտանիքի նկարագիրը՝ արդիական դարձնելով ընտանեկան դաստիարակության, դպրոցի, ընտանիքի և ընդհանրապես համայնքի համագործակցության հիմնախնդիրը: Այս տեսանկյունից դպրոցների մանկավարժական կոլեկտիվները իրենց առաքելությունը պետք է տեսնեն ոչ միայն սովորողներին գիտելիքներ տալու, այլ բարոյական, մարդասիրական հատկանիշներով օժտված, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների հասարակությանը նպաստ բերող ու գործուն անհատների դաստիարակման մեջ: Այդ առաքելությունը կարելի է իրագործել միայն մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և նրանց ընտանիքների հետ սերտ համագործակցության պայմաններում:Ուսուցիչների, ծնողների և երեխաների

[1] https://aspu.am/website/images/files/87fdba42.pdf էջ 1

փոխգործակցությունը կարող է արդյունավետ լինել, եթե նշված սուբյեկտներն ստանձնեն փոխհամաձայնեցված աշխատանքի պատասխանատվություն, գործեն միասին, համատեղ ջանքերով պլանավորեն գործունեությունը և իրականացնեն արդյունքների համատեղ գնահատում:Այդօրինակ համագործակցությունը ենթադրում է մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխայի և համատեղ գործունեության նկատմամբ միասնական պահանջներ, երեխայի ուսումնասիրում ընտանիքում և նրա զարգացման ծրագրի կազմում: Միաժամանակ դպրոցի խնդիրն է զարգացնել ծնողների և երեխաների համագործակցության ու հաղորդակցման կարողությունները:[2]

Հոդված 51 Երեխաներին դաստիարակելու և կրթություն տալու՝ ծնողների իրավունքներն ու պարտականությունները

1. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին:

Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին:

Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

2. Ծնողները պարտավոր են ապահովել երեխաների կրթություն ստանալը:

Ծնողները, երեխաների կարծիքը հաշվի առնելով հանդերձ, ունեն կրթական հաստատության և երեխաների ուսուցման ձևի ընտրության իրավունք մինչև երեխաների հիմնական ընդհանուր կրթություն ստանալը:[3]

Կարևոր է իմանալ, որ ծնող ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենքանվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպեսզի ենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայնրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն:[4]

Իհարկե, դպրոց – ընտանիք համագործակցությունը միակողմանի չի լինում. Ծնողը ևս շատ հարցերում կարող է դպրոցին, ուսուցչին սատարել և դա դպրոցի հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի: Ծնողները կարող են ուսուցչին օգնել կրթական միջավայրի

[2] https://aspu.am/website/images/files/Grigoryan%20Vahagn.pdf էջ3
[3] https://www.arlis.am/documentview.aspx?docid=66138
[4] http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf էջ 4

ձևավորման,երեխաների արտադասարանական աշխատանքի և ազատ ժամանակի կազմակերպման,նրանց և ուսուցիչների համագործակցության խորացման, մասնագիտական կողմնորոշմանև այլ հարցերում:[5]

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Սովորողների ուսումնաճանաչողական արդյունավետ գործունեության և ակտիվության ապահովման ռազմավարության և մարտավարության մշակում:

2. Ուսուցիչների, սովորողների և նրանց ծնողների փոխգործակցության երկարաժամկետ համալիր ծրագրի մշակում՝ ընտանեկան դաստիարակության ավանդույթների վերածնման նպատակով:

3. Ծնողների հոգեբանամանկավարժական, սոցիալական գիտելիքների հարստացման ուղղությամբ պլանավորված, անընդմեջ աշխատանքների կազմակերպում:

4. Ընտանեկան դաստիարակության դրական փորձի փոխանակում համադպրոցական մակարդակում:

5. Ուսուցիչների, ծնողների և երեխաների համաստեղծագործական գործունեության և ազատ ժամանակի կազմակերպում՝ որպես փոխգործակցության կազմակերպման լավագույն տարբերակ:[6]

[5] https://aspu.am/website/images/files/87fdba42.pdf էջ1
[6] https://aspu.am/website/images/files/Grigoryan%20Vahagn.pdf էջ13

Գործնական համատեքստ

§Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակենք,

մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝

մեր ապագա վիշտը, մեր արտասուքները,դա մեր հանցանքն է մյուս

մարդկանց առջև,ամբողջ երկրի առջև¦

Մակարենկո

Առանց դպրոցի և ընտանիքի փոխհամագործակցության, անհնար է երեխայի լիարժեք և ներդաշնակ զարգացումը: Ծնողների շրջանում մեր իրականացրած հարցումները հավաստում են, որ նրանք գիտակցում են, որ միայն դպրոցի հետ համագործակցելը կօգնի հաջողությամբ լուծել իրենց երեխաների կրթական խնդիրները և կապահովի նրանց համար բարենպաստ կրթական միջավայր: Սակայն ոչ բորոր ծնողներն են գիտակցում, որ երեխայի կրթական հաջողությունները մեծապես կախված են նաև նրանից, թե որքան են իրենք կարողանում ժամանակ տրամադրել, օգնել, աջակցել երեխային, որքանո՞վ են տանը հարմարություններ և ընտանեկան նպաստավոր, ջերմ միջավայր ստեղծել նրանց ուսումնառության, ազատ ժամանակի կազմակերպման, հոգեկան ու ֆիզիկական առողջության պահպանման համար: Որքանո՞վ են կրթությունը, դաստիարակությունը,ուսումն ու գիտելիքը տվյալ ընտանիքում արժեք, որքանո՞վ է իր կյանքին վերաբերող խնդիրների լուծման ու համապատասխան որոշումների ընդունման գործում երեխայի մասնակցությունը և ձայնը լսելի ընտանիքում: Ծնողների մի մասն էլ մոռանում է, որ իրենց օրինակը երեխաների համար ընդօրինակման օբյեկտ է, և իրենք ստիպված են նրանց ներկայությամբ սթափ և հավաքված լինել: Իհարկե, այս բոլոր հարցերում ընտանիքի առաջին և շատ դեպքերում, միակ օգնականը ուսուցիչն է, ով կարող է ծնողին գիտելիքներ հաղորդել և աջակցել նրան երեխաների համար ընտանեկան ջերմ մթնոլորտ ստեղծելու գործում:[7]

Արդեն 32 տարի է աշխատում եմ դպրոցում: Աշխատել եմ դասղեկ և երկար տարիներ է, որ աշխատում եմ փոխտնօրեն: ՈՒնեմ բավականաչափ փորձ, ինչը ինձ թույլ կտա հետազոտել ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան

[7] https://aspu.am/website/images/files/87fdba42.pdf էջ1

դաստիարակության հարցերում: Դեռ դպրոցական տարիներից հասկացել եմ, որ երեխայի դաստիարակության, կրթության կազմակերպման գործում մեծ է ուսուցչի և ծնողի համագործակցությունը, քանի որ ունեցել եմ այնպիսի դասղեկ, ով եղել է ինձ համար հեղինակություն և օրինակ իմ աշխատանքային գործունեության ընթացքում:Երբ դասղեկ էի աշխատում, կանգնած էի բարդ խնդրի առջև.ունեի մի դասարան,որտեղ չկար կարգ ու կանոն, ընկերասիրություն, միմյանց նկատմամբ հանդուրժողականություն, հարգանք, ուսման նկատմամբ հետաքրքրություն: Աշակերտները իրար հետ չէին խոսում:Դասարանում տղաներից միայն մեկն էր լավ սովորում:Իմ առջև խնդիր դրեցի բարոյահոգեբանական այնպիսի մթնոլորտ ստեղծել,որ բոլոր աշակերտները շփման եզրեր գտնեն: Հրավիրեցի մեր տուն, հյուրասիրեցի, խաղեր կազմակերպեցի, պարեցինք, արտասանեցինք, լավ օր անցկացրեցինք: Միասին որոշեցինք ամեն շաբաթ այցելել մեկի տուն:Այցելությունների ընթացքում պատկերացում էի կազմում յուրաքանչյուր ընտանիքի բարոյական արժեքների, նախասիրությունների, երեխայի հետաքրքրությունների, ընտանիքում հաղորդակցման նախասիրությունների մասին: Հարազար էինք դարձել:Հիշում եմ,որ մի օր աղջիկս նեղացած ասաց, որ իմ աշակերտներին ավելի շատ եմ սիրում ու ժամանակ հատկացնում, քան սեփական երեխաներին: Բազմաբնույթ աշխատանքի (դասղեկի ժամեր, ծնողական ժողովներ, ծնողների դասալսումներ, միջոցառումներ, էքսկուրսիաներ, ծնողի հետ համագործակցություն, աշակերտների հետ անհատական աշխատանք) շնորհիվ աշակերտները դարձան համերաշխ, ընկերասեր, ուսման նկատմամբ հետաքրքրություն էին ցուցաբերում:

Երեխայի դաստիարակության պատասխանատուն ծնողն է կամ օրինական ներկայացուցիչը: Հաճախ է հնչում այն միտքը,որ երեխան ընտանիքի «հայելին» է: Ծնողի կապը դպրոցի հետ սկսվում է ծնողի դիմումով: Եթե դպրոցում գործում է նախակրթարան՝ ընդունել 5 տարեկանից, եթե չկա՝ առաջին դասարան՝ 6 տարեկանից:Տնօրենի հետ պայմանագիր կնքելիս ծնողը հստակ գիտի իր պարտականությունները և իրավունքները:Հաջորդ կապը դասարանական ծնողական ժողովներն են: Ծնողները պետք է հնարավորություն ունենան մասնակցել դպրոցի կառավարմանը և պատասխանատվություն կրեն իրենց պարտականությունների համար:

Այսօր դպրոցը ծնողներին բազմաթիվ հնարավորություններ է տալիս ակտիվ մասնակցել ուսումնադաստիարակչական գործընթացին:Ունենք այնպիսի պատրաստակամ ծնողներ,որոնք իրենց ստեղծագործական միտքն ու աշխատանքը օգտագործում են դպրոցական միջոցառումների ժամանակ: Ծնողների կապը ու համագործակցությունը

ամուր է տարրական դպրոցում: Կարևոր է ուսումնադաստիարակչական աշխատանքի ճիշտ դրվածքը կրտսեր դպրոցում: Ուսուցչի ամենակարևոր, առաջնային քայլը բացահայտել ինչպիսի բարոյահոգեբանական մթնոլորտում է սովորողը դաստիարակվում, համաձայնեցվու՞մ են արդյոք ընտանիքում և դպրոցում դաստիարակության սկզբունքները ու մեթոդները,ինչպե՞ս է ազդում շրջապատը երեխայի դաստիարակության վրա:Ուսուցիչը կրտսեր դպրոցում հիմնականում ամենօրյա կապ է պահում սովորողի ծնողի կամ ծնողի ներկայացուցիչի հետ:Կրտսեր դպրոցի ուսուցիչները հենվում են ընտանիքի վրա, համագործակցում ծնողների հետ:Սովորողները դպրոցում իրենց զգում են ինչպես իրենց տանը,ուսուցիչը հեղինակություն է ծնողի համար: Երբ անցում է կատարվում միջին դպրոց, փոխվում է սովորողների պատկերացումները դպրոցի մասին:Սովորողը դառնում է ավելի ինքնուրույն, սակայն ծնողների կապը,համագործակցությունը ուսուցչի հետ պահպանվում է՝ ծնողական ժողովներ,աշխատանք ծնողական ակտիվի հետ, անհատական զրույցներ, միջոցառումներ, էքսկուրսիաներ և այլն: Ավագ դպրոցում ուսուցիչները հաճախ հանդիպում են այնպիսի խնդիրների, որ սովորողը ցանկանում է իրեն վերաբերող հարցերը ինքնուրույն լուծել: Երբ առաջանում է ուսումնադաստիարկչական որևէ խնդիր, հատկապես տղա աշակերտները, իրենց համարելով արդեն կայացած, ցանկանում են այդ հարցը լուծել ինքնուրույն: Այստեղ է,որ դժվարանում է ուսուցիչ-ծնող համագործակցությունը: Թերևս իմ աշխատանքային գործունեության ընթացքում միշտ գտել եմ միջոց հաղթահարելու և լուծելու խնդիրը և եկել եմ այն եզրակացության,որ ավագ դպրոցի աշակերտի հետ աշխատելիս պետք է փոխադարձ հարգանք ցուցաբերել, ավագ ընկերոջ դերում լինել, համագործակցել ծնողների հետ, սակայն որոշ դեպքերում չբարձրաձայնել:

Հետազոտության ընթացք

Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում հետազոտել եմ հետևյալ դեպքերում՝

1.ԿԱՊԿՈՒ(կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) աշակերտի ծնողի հետ

2.Հաճախակի բացակայող աշակերտի, կրթությունից դուրս մնացած աշակերտի ծնողի հետ

3.Դժվար դաստիարակվող աշակերտի ծնողի հետ

4.Տնային ուսուցում ստացող աշակերտի ծնողի հետ

5.Հեռավար կրթության ժամանակ

6.Այլ կրթական(Թումո)հաստատություն հաճախող աշակերտի ծնողի հետ

7.Միջոցառումների ժամանակ

8.Էքսկուրսիաների դեպքում

1. Համագործակցությունը ԿԱՊԿՈՒ աշակերտի ծնողի հետ անհրաժեշտություն է, ծնողների հետ զրույցը կարևոր է դիտարկման արդյունքները ճշտելու համար: ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողները կարող են հաղորդել այնպիսի տվյալներ, որոնց ձեռք բերումը ուսուցչի համար դժվար կլինի(ինքնուրույն,դասարանական միջավայրում կամ այլ ճանապարհով): Ծնողները կարող են բարդ խնդրի պարզ լուծումներ առաջարկել: Ծնող-ուսուցիչ-մասնագետ համագործակցությունը կնպաստի սովորողի զարգացմանը,ուսուցման կազմակերպման համապատասխան միջավայրի ստեղծմանը, կրթական կարիքների բավարարման արդյունավետ ուղիների որոնմանը:Կարևոր է ԱՈՒՊ (անհատական ուսումնական պլան)-ի կազման գործընթացում սովորողի ծնողի ակտիվ մասնակցությունը: Արդեն 7 տարի է աշխատում ենք ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների հետ: Շատերի հետ համագործակցել ենք և ունեցել ենք դրական արդյուքներ,սակայն եղել են այնպիսի ծնողներ,ովքեր ճիշտ չեն պատկերացրել ներառական կրթության էությունը: Ծնողական ժողովների,սեմինարների,անհատական զրույցների,թիմի ճիշտ աշխատանքի միջոցով, ծնողների մոտ ճիշտ ընկալում ենք ձևավորել: Ունենք աշակերտ ով չի խոսում և չի շփվում միայն դասի ժամանակ լուռ նստում է: Ծնողի հետ համագործակցելով(տնային հանձնարարությունը ծնողի միջոցով փոխանցելով, կապը պահպանելով), աշակերտին ներգրավվել ենք ուսման մեջ:

2.Հաճախակի բացակայող աշակերտի ծնողի հետ համագործակցելով՝ հիմնականում ունեցել ենք հաջողություններ: Իմ մեջ տպավորվել է մի դասղեկի աշխատանք,ով հետևողական լինելով, կարողացավ երկու չհաճախող աշակերտի բերել դպրոց և նրանք բավականին լավ սովորում էին: Ամեն աշխատանքային օր, այցելում էր աշակերտի տուն, համագործակցում ծնողի հետ, արդյունքում կարողացավ լուծել այդ հարցը: Եղել է նաև չհաջողված դեպք, երբ 3 տարի շարունակ աշխատել ենք կրթությունից դուրս մնացած աշակերտի, աշակերտի ծնողի, բոլոր պատասխանատու օղակների հետ,սակայն աշակերտը ծնողի անպատասխանատու լինելու, չհամագործակցելու պատճառով, չի հաճախել դպրոց:Սա այն դեպքն է, երբ ծնողը չի կատարում իր ծնողական պարտականությունը, ընտանեկան դաստիարակության մեջ բացակայում է ծնողի և երեխայի ճիշտ փոխհարաբերությունները :

3. Դժվար դաստիարակվող աշակերտի ծնողի հետ տարբեր աշխատանքներ ենք տարել,կառանձնացնեմ մեկը: 6-րդ դասարանում սովորող տղա աշակերտների փոխհարաբերություններում ոչ մի կերպ չէր ստացվում ընկերասիրություն, հանդուրժողականություն դաստիարակելը:Բաժանված էին խմբերի և թշնամաբար էին վերաբերվում միմյանց:Դպրոցում վերահսկում էինք բախումները,սակայն տուն գնալուց միշտ լինում էին բախումներ: Տարբեր օղակների հետ աշխատելուց հետո ծնողներից մեկը փորձեց այդ հարցը հետևյալ կերպ լուծել: Ամեն օր գալիս էր դպրոց, տղաների հետ զրուցում էր (նշում, որ նրանց հայրիկների հետ ընկերություն է անում, առաջարկում էր տղաներին իրենց ուժերը սպորտի մեջ փորձել): Ծնող-դասղեկ-աշակերտ համագործակցության շնորհիվ ունեցանք խնդրի լուծում, այդ դասարանում (արդեն 9-րդ) սովորող մի քանի տղաներ սպորտում հաջողություններ են գրանցել:

4.Եղել են դեպքեր,երբ առողջական խնդիրների պատճառով աշակերտները տնային ուսուցում են ստացել կամ տանից մասնակցել հեռավար կրթության:Այս դեպքում ուսուցիչ-ծնող համագործակցությունը օդ ու ջրի նման անհրաժեշտ է և փորձել ենք հնարավորինս այն ապահովել(տնային այց, հոգատարություն, համադասարանցիների այց), ստեղծել այնպիսի բարոյահոգեբանական միջավայր, որ երեխան իրեն մեկուսացած չզգա: 5-րդ դասարանի սովորողի ձեռքը կոտրվել էր: Ծնողի հետ կապը միշտ կար, աշակերտները այցելում էին,օգնում էին դասը սովորել, դասընկերոջ տնայինները իրենք էին գրում (սովորողը թելադրում էր պատասխանը): ՈՒսուցիչ-ծնող-դասընկեր համագործակցության, ուշադրության շնորհիվ ստեղծվել էր այնպիսի բարոյահոգեբանական միջավայր, որ սովորողը իրեն մեկուսացված, անտեսված չզգաց, կրթությունից էլ հետ չմնաց:

5.Երբ համավարակի ժամանակ միանգամից անցանք հեռավար կրթության, ծնողների դերը, համագործակցումը ուսուցիչների հետ դարձավ անհրաժեշտություն՝ դարի մարտահրավերը հաղթահարելու համար: Հեռավար դասընթացների ժամանակ հստակ առանձնանում էին այն ծնողները, որոնք տիրապետում էին ժամանակակից տեխնոլոգիաներին, օգնում էին իրենց երեխաներին մասնակցելու հեռավար դասընթացների: Ծնողների ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետելու հմտությունները դարձել են անհրաժեշտություն երեխաների կրթության կազմակերպման գործում: Հեռավար կրթության ժամանակ դասերը անցկացնում էին՝ օգտվելով Viber, Zoom հարթակներից: Ծնողի ինքնակրթվելու պահանջը դարձել է անհրաժեշտությունը: Դասղեկների և օպերատորի օգնությամբ, ծնողների հետ համագործակցելով՝ ստեղծել ենք Teams հարթակ, անհրաժեշտության դեպքում օգտվելու նպատակով:

6.Միշտ կանորում եմ անձի բազմակողմանի զարգացումը, այնքանով, որքանով որ այն չի վնասում անձի ձևավորմանը: Սակայն երբեմն լինում են դեպքեր, երբ ծնողը վստահում է, ժամանակից շուտ է երեխային ազատ թողնում այլ կրթական միջավայր: Շրջապատի ազդեցության պատճառով այն երբեմն բացասական ազդեցություն է ունենում, հեռացնում է աշակերտին դպրոցից և հետագա ուսուցիչ-ծնող համագործակցությունը արդյունք չի տալիս: Ծնողները պետք է ունենան մեդիագրագիտություն,որ կարողանան պաշտպանել երեխային ինտերնետի վնասակար ազդեցությունից:

7.Մեծ է միջոցառումների դերը ծնողներին ներգրավվելու սովորողների կրթության կազմակերպման հարցերում: Ցանկացած միջոցառման ժամանակ ծնողը դպրոցից ստանում է այնպիսի արժեքներ, որոնք կօգտագործի ընտանեկան դաստիարակության մեջ: Ծնողների մասնակցությամբ տարաբնույթ միջոցառումներ եմ անցկացրել. «Ոսկե աշուն», «Հարիսայի եփման արարողություն», «Հմուտ ձեռքեր» և այլն: Միջոցառումների ժամանակ բացահայտվել է ծնողների ստեղծագործական, աշխատանքային, մշակութային ունակությունները, ինչը օգնում է պատկերացում ունենալ ծնողների ընտանեկան սովորույթների, ավանդույթների, հնարավորությունների, յուրահատկությունների մասին:

8. Էքսկուրսիաները նպաստում են հոգևոր, ֆիզիկական, մշակութային, գեղագիտական ,հայրենասիրական դաստիարակությանը, անձի անվտանգության մշակույթի ձևավորմանը: Լինելով մասնակից ՝ ծնողները տեսնում, զգում, հասկանում են այն բացերը, ինչը առկա է իրենց ընտանեկան դաստիարակության մեջ: Ծնողների հետ բազմաթիվ անգամ մասնակցել եմ էքսկուրսիաների: Էքսկուրսիաների ժամանակ պատկերացում եմ կազմել նրանց ուսման նկատմամբ ընկալումների մասին, որն էլ նպաստել է կրթության արդյունավետ կազմակերպմանը:

Եզրակացություն

Հետազոտելով ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում, վերլուծելով խնդիրը՝ եկել եմ այն եզրակացության,որ անհրաժեշտ է դպրոցում՝

Հաճախակի կազմակերպել հանդիպումներ տարաբնույթ թեմաներով (ժողովրդավարություն, հանդուրժողականություն, պատասխանատվություն):

Ծնողական ժողովների ժամանակ ծնողներին ծանոթացնել ընտանեկան փորձի հետ, օգնել իմանալու երեխաների դաստիարակության բարդ հարցերը:

Կազմակերպել սեմինարներ, որոնք կնպաստեն ծնողների իրազեկմանը (մեդիագրագիտություն, անձի անվտանգություն):

Ծնողներին ներգրավվել երեխայի կրթությանը վերաբերող կարևոր հարցերի քննարկման ու որոշումների կայացմանը (ծնողական խորհուրդ):

Հենվելով ծնողների ունակությունների և նախասիրությունների վրա՝ հաճախ մասնակից դարձնել դպրոցական միջոցառումներին:

Հաճախակի անցկացնել ծնողների հետ անհատական հանդիպումներ,անցկացնել խորհրդատվություններ:

Ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտը հասկանալու համար այցելել սովորողի տուն(անհրաժեշտության դեպքում հաճախակի):



Գրականության ցանկ

[1]https://aspu.am/website/images/files/87fdba42.pdf

[2]https://aspu.am/website/images/files/Grigoryan%20Vahagn.pdf

[3]https://www.arlis.am/documentview.aspx?docid=66138

[4]http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf